ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ **N 5/3**

<<**23**>> **նոյեմբերի 2023** թվականի գ.Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Նիստը արձանագրում է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Լիանա Մանուչարյանը

Նիստին մասնակցում են՝

Տեղ համայնքի ավագանու թվով 9(ինը) անդամներ՝

1.Առաքելյան Վահե

2.Դալլաքյան Արման

3.Դանիելյան Սևադա

4. Ձեյնալյան Մասիս

5.Ղուլունց Դավիթ

6.Ղուկասյան Արագած

7.Միրզոյան Արամ

8.Միքայելյան Աննա

9. Շեգունց Ռոմիկ

Բացակայում են Տեղ համայնքի ավագանու թվով 6(վեց) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Նազիկ Բաղդասարյանը, Լորա Սիմոնյանը, Ասպետ Գալստյանը, Հայրապետ Հայրապետյանը և Արգամ Հովսեփյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Համայնքի բոլոր բնակավայրերի վարչական ղեկավարները և օպերատորները,
Տեղ համայնքի անասնաբույժ Արագած Ղուլունցը և համայնքի բնակիչներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղուլունցը

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով, համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 23-ի 5-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 23-ի N57-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների

թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 6-ի N 13-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-8 **ԴԵՄ-1** **ՁԵՌՆՊԱՀ-0**

Որոշումն ընդունվեց

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ կետով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022թվականի նոյեմբերի 23-ի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայքնի 2023թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 57-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները:

1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 448056,226 հազ. դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 447997,001 հազ. դրամ» բառերով:

2)Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 516804,509 հազ. դրամ» բառերը փոխարինել«ծախսերի գծով՝ 516745,284 հազ. դրամ» բառերով:

3)Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «Դիֆիցիտը (պակասուրդը)՝ 68748,283 հազ. դրամ» :

4)Որոշման 1-ին, 2-րդ ,3-րդ ենթակետերի նախատեսված հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9 **ԴԵՄ-0** **ՁԵՌՆՊԱՀ-0**

Որոշումն ընդունվեց

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 - 2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրն և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայքնի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-8 **ԴԵՄ-1** **ՁԵՌՆՊԱՀ-0**

Որոշումն ընդունվեց

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԱՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու

մասին» N 286 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ հավանություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշեն գյուղի Արցախյան խճուղի թիվ 17 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.06 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-111-0106-0054) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 201960 (երկու հարյուր մեկ հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Արտահայտվեցին՝

Ավագանու անդամներ Մասիս Զեյնալյանը, Սևադա Դանիելյանը, ինչպես նաև Քարաշեն բնակավայրի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը ողջունեցին կառավարության կողմից հաստատված ծրագրի արդիականացմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունվեց

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂ ԳՅՈՒՂԻ Ս.ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3/2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԱՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ հավանություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի Ս.Բարխուդարյան փողոցի թիվ 1/3/2/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «Հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0019-0037) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ ծաղկի սրահ կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 51480 (հիսունմեկ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9 **ԴԵՄ-0** **ՁԵՌՆՊԱՀ-0**

Որոշումն ընդունվեց

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 83-րդ հոդվածի 2-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով Տեղ համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու

2023 թվականի փետրվարի 6-ի N 13-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-8 **ԴԵՄ-1** **ՁԵՌՆՊԱՀ-0**

Որոշումն ընդունվեց

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, որոշման նախագծի կողմ-, դեմ-, ձեռնպահ- քվեարկության արդյունքներով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հարապետության Սյունիքի մարզի Տեղ համայքնի 2024 թվականի բյուջեն.

1) Եկամուտների գծով՝ 288073,387 հազ. դրամ,

2)Ծախսերի գծով՝ 288073,387 հազ. դրամ

2. Հաստատել համայնքի բյուջի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջիմնացորդի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջի մնացորդի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8. Համաձայն « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանել՝

1) Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ.

2) Համայքնի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-8 **ԴԵՄ-1** **ՁԵՌՆՊԱՀ-0**

Որոշումն ընդունվեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 26-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՂՄ-9 **ԴԵՄ-0** **ՁԵՌՆՊԱՀ-0**

Որոշումն ընդունվեց

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

_____**Առաքելյան Վահե**

_____**Դալլաքյան Արման**

_____**Դանիելյան Սևադա**

_____**Զեյնալյան Մասիս**

_____**Ղուլունց Դավիթ**

_____**Ղուկասյան Արագած**

_____ Միրզոյան Արամ

_____ Միքայելյան Աննա

_____ Շեգունց Ռոմիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԼԻԱՆԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**